Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1065-11.01.2011-ԱՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության՝ 1996 թվականի մայիսի 29-ի թիվ ՀՕ-61 օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ բաժնի 9-րդ գլխի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ, ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ (ՎԻԶԱՆԵՐ) ՏԱԼՈՒ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ»

Հոդված 2. Օրենքը լրացնել 37.1 հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 37.1. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց եւ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող քաղաքացիություն չունեցող անձանց տալիս է Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականներ:

Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը միանգամյա օգտագործման ճամփորդական փաստաթուղթ է, որը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության քաղաքացուն՝ կորած, անվավեր, ժամկետանց կամ օգտագործման համար ոչ պիտանի անձնագրի դեպքում, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց եւ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող քաղաքացիություն չունեցող անձանց՝ կորած, անվավեր, ժամկետանց կամ օգտագործման համար ոչ պիտանի ճամփորդական փաստաթղթի դեպքում, օտարերկրյա պետությունից շտապ վերադառնալ Հայաստանի Հանրապետություն:

Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի նկարագիրը եւ տրման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթիկ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագծի վերաբերյալ ստացված առաջարկությունների

Հ/հ	Առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը, որում առաջարկվում է կատարել փոփոխություն/լրացում	Առաջարկության (փոփոխության, լրացման) բովանդակությունը	Հիմնական զեկուցողի եզրակացությունը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 37.1 հոդվածի 2-րդ պարբերություն	«փախստականի կարգավիճակ ունեցող» բառերը փոխարինել «փախստական ճանաչված և ապաստան ստացած» բառերով:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածում «օրվանից» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:	Ընդունվել է